Համաձայնագիր քաղաքների գործընկերության մասին՝ Նաումբուրգ (Զալե) քաղաք (Սաքսեն-Անհալթ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) և Արմավիր քաղաք (Արմավիրի մարզ, Հայաստանի Հանրապետություն)

Ներածություն

Այս քաղաքների գործընկերության համաձայնագրով նախատեսվում է երկու քաղաքների միջև առկա բարեկամական կապերի ամրապնդումը և ընդլայնումը: Երկու կողմերն էլ հայտնում են պատրաստակամություն՝ խորացնելու և խթանելու Նաումբուրգի (Զալե) և Արմավիրի քաղաքների միջև գործընկերային և վստահելի համագործակցությունը:

Այս համաձայնագիրը երկու համայնքների ցանկության արդյունքն է՝ միմյանց փոխլրացնելու: Նաումբուրգը քաղաք է՝ հնագույն պատմությամբ և հարուստ մշակութային ժառանգությամբ: Նաումբուրգի Սուրբ Պետրոսի և Սուրբ Պողոսի տաճարը *2018* թվականի հոկտեմբերի *21*-ին պաշտոնապես ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Արմավիրի մարզը նույնպես ունի հարուստ պատմություն, իսկ մարզի մայրաքաղաք Արմավիրը երիտասարդ քաղաք է: Արմավիրի մարզում գտնվում է Էջմիածնի Մայր տաճարը՝ ևս մեկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտ:

Երկու քաղաքների միջև համագործակցության բանակցությունները սկսվել են *2020* թվականին: Երկու համայնքների ընտրված ներկայացուցիչները կազմակերպել են մի քանի պատվիրակությունների այցեր: Նաումբուրգի (Զալե) և Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևան քաղաքի միջև երկարամյա դպրոցական փոխանակումները տարիներ շարունակ նպաստել են երկու երկրների մերձեցմանը:

Գործընկերության նպատակները

Նաումբուրգ (Զալե) և Արմավիր քաղաքները զարգացնում են իրենց քաղաքների գործընկերային հարաբերությունները հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի հիման վրա՝ մշակութային, տնտեսական և զբոսաշրջային ոլորտներում՝ իրենցհնարավորությունների շրջանակում :

Երկու կողմերն էլ ձգտում են ամրապնդել իրենց քաղաքացիների միջև մշակութային և զբոսաշրջային փոխանակումը: Սա կարող է իրականացվել, օրինակ, դպրոցների գործընկերության, երիտասարդների հանդիպումների, քաղաքացիների ուղևորությունների կամ միությունների հանդիպումների միջոցով՝ օրինակ սպորտի ոլորտում: Բացի այդ, նախատեսվում է խթանել փոխանակումը համանման թեմաների շուրջ:

Մասնավորապես, ընդգրկված են նաև խաղողագործությունը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտները:

Այս համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Նաումբուրգ (Զալե) քաղաքի քաղաքապետ պարոն Արմին Մյուլլերի և Արմավիր համայնքի ղեկավար Վարշամ Սարգսյանի կողմից ստորագրվելուց հետո,քանի դեռ կողմերից որևէ մեկը գրավոր ծանուցում չի ուղարկել մյուս կողմին՝ տեղեկացնելու համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին: Դադարեցման մասին պետք է ծանուցվի վեց ամիս առաջ:

Համաձայնագիրը ստորագրվել է Նաումբուրգում (Զալե) *2025* թվականի հունիսի *13*-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրում՝ հայերեն և գերմաներեն պաշտոնական տարբերակներով, որոնց տեքստերը նույնականեն: Թարգմանության մեջ շեղումների դեպքում կիրառվում է գերմաներեն տեքստը:

ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ԱՐՄԻՆ ՄՅՈՒԼԼԵՐ
ՆԱՈՒՄԲՈՒՐԳԻ (ԶԱԼԵ) ՔԱՂԱՔԱՊԵՏ

Scanned with CamScanner

Naumburg & Armavir

STÄDTEPARTNERSCHAFTSVEREINBARUNG

Präambel

Mit dieser Städtepartnerschaftsvereinbarung sollen die bisherigen guten Beziehungen zwischen beiden Städten fortgeführt und ausgebaut werden. Beide Partner bekunden ihren Willen, die partnerschaftliche und vertrauensvolle Zusammenarbeit zwischen den Städten Armavir und Naumburg (Saale) zu vertiefen und weitere Kooperationen zu fördern.

Die folgende Vereinbarung ist das Ergebnis des Wunsches der beiden Gemeinden, sich gegenseitig zu ergänzen. Naumburg (Saale) ist eine Stadt mit jahrhundertealter Geschichte und einem reichen kulturellen Erbe. Der Naumburger Dom St. Peter und St. Paul wurde am 21. Oktober 2018 offiziell in die Liste des UNESCO-Weltkulturerbes aufgenommen.
Die Provinz Armavir hat eine ebenso lange wie bewegte Geschichte, in der die gleichnamige Hauptstadt eine junge Gründung ist. In der Provinz Armavir ist die Kathedrale von Etschmiadsin ebenfalls UNESCO-Weltkulturerbe.

Die Gespräche zwischen den beiden Städten begannen im Jahr 2020. Mehrere Delegationsbesuche wurden von den gewählten Vertreterinnen und Vertretern der beiden Gemeinden organisiert. Der langjährige Schulaustausch zwischen Schülerinnen und Schülern in Naumburg (Saale) und Jerewan, der Hauptstadt der Republik Armenien, hat bereits seit vielen Jahren dazu beigetragen, die Annäherung beider Länder zu verstärken.

Ziele der Partnerschaft

Die Stadt Naumburg (Saale) und die Stadt Armavir entwickeln ihre städtepartnerschaftlichen Beziehungen auf Grundlage von Toleranz und gegenseitiger Achtung auf kulturellem, wirtschaftlichem und touristischem Gebiet sowie in weiteren Bereichen im Rahmen ihrer Möglichkeiten.

Beide Seiten sind bestrebt, den kulturellen und touristischen Austausch ihrer Bürgerinnen und Bürger zu stärken, wie etwa durch Schulpartnerschaften, Jugendbegegnungen, Bürgerreisen und Vereinstreffen, zum Beispiel auf sportlichem Gebiet.

Zudem soll der Austausch über verbindende Themen gefördert werden. Dazu gehören unter anderem der Weinbau und die UNESCO-Welterbestätten.

Diese Vereinbarung tritt nach der Unterzeichnung durch den Oberbürgermeister der Stadt Naumburg (Saale), Herrn Armin Müller, und den Bürgermeister der Stadt Armavir, Herrn Varsham Sargsyan, in Kraft und bleibt so lange wirksam, bis eine der beiden Parteien der anderen Partei schriftlich ihre Absicht mitteilt, die Vereinbarung zu kündigen. Diese Kündigung muss mit einer Frist von sechs Monaten erfolgen.

Unterzeichnet in Naumburg (Saale) am 13. Juni 2025
(In zwei Originalausfertigungen, jeweils in armenischer und deutscher Fassung, deren Texte identisch sind. Im Fall einer Abweichung bei der Übersetzung gilt der deutsche Text.)

ARMIN MÜLLER
OBERBÜRGERMEISTER NAUMBURG (SAALE)

VARSHAM SARGSYAN
BÜRGERMEISTER ARMAVIR

Scanned with CamScanner